ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Կարեն Բրուտյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Թբիլիսի (Վրաստան)

2019 թվականի նոյեմբերի 5-9

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Եվրոմիության ՍԻԳՄԱ ծրագիր

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Եվրոպական հարևանության քաղաքականության արևելյան երկրների պետական գնումների վերաբերյալ երրորդ տարածաշրջանային համաժողովին

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

1. Պետական գնումների քաղաքականություն. Գերակայություններ և մարտահրավերներ
2. Պետական գնումների համակարգի արդյունավետություն
3. Գնումների կատարման ժամանակակից գործիքներ

4. Հասանելությունը գնման ընթացակարգերին

5. Գնումների հետ կապված բողոքներ քննող մարմինները

6. Գնումների բողոքարկման ազգային համակարգերը

7. Քաղաքացիական հասարակության դերը գնումների ընթացակարգերի վերահսկման գործընթացում

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Աշխատանքային խմբի նիստի ընթացքում ներկայացվել են հայկական կողմի մոտեցումները, ինչպես նաև առաջարկություններ՝ նախագծվող փաստաթղթերով սահմանվելիք կարգավորումների վերաբերյալ

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Համաժողովի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել Եվրոպական Միության հանձնաժողովի համապատասխան դեպարտամենտի, ՍԻԳՄԱ ծրագրի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի և Համաշխարհային Բանկի ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ՝

- Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը տեխնիկական և ֆինանսական աջակցություն կցուցաբերի էլեկտրոնային գնումների նոր ծրագրային ապահովման մշակման և ներդրման աշխատանքներում.

- Համաշխարհային Բանկը կամփոփի և կներկայացնի այլընտրանքային գնումների կիրառման մասով վերջնական առաջարկներ, որոնք կներառվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությունների նախագծում: Առաջարկների հաստատման արդյունքում հնարավոր կդառնա բանկի կողմից նոր սկսվող ծրագրերի շրջանակում գնումներն իրականացնել ազգային ռեժիմով սահմանված կանոններին համապատասխան.

- ՍԻԳՄԱ ծրագրերի փորձագետները տեխնիկական աջակցության շրջանակում փորձաքննության կենթարկեն ՞Գնումների մասին՞ ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությունները՝ ԱՀԿ գնումների համաձայնագրին համապատասխանության ապահովման տեսակետից:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համաժողովին ընթացքում ձեռքբերված պայմանավորվածությունները նախատեսվում է իրագործել 2019 թվականի նոյեմբեր ամսից: Ակնկալվում է ստանալ տեխնիկական և ֆինանսական աջակցություն էլեկտրոնային գնումների նոր համակարգի մշակման և ներդրման համար, ինչպես նաև ստեղծել Համաշխարհային Բանկի կողմից նոր սկսվող ծրագրերի շրջանակում գնումներն ազգային ռեժիմով իրականացնելու պայմաններ:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

12.11.2019թ.